

**«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ II
ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԸ**

1. Նշվածներից ո՞ր դեպքում կազմակերպությունը էլեկտրոնային ձևով կարող է հաշվարկային /հարկային/ հաշիվ դուրս չգրել՝

ա) հարկ վճարողի հիմնական միջոցների և արագամաշ առարկաների տեղափոխման.

բ) իրեն աստցացված համարվող կազմակերպությանը ապրանքներ մատակարարելիս .

գ) երբ գնորդը նման պահանջ չի առաջադրում .

դ) բոլոր դեպքերում պարտավոր են դուրս գրել էլեկտրոնային կարգով:

2. Եթե ֆիզիկական անձը ԵԱՏՄ երկիր չհամարվող երկրից ներմուծել է թվով մեկ ապրանք, ո՞ր դեպքում մաքսավճար չի վճարի՝

ա) մաքսավճար չի վճարվի անկախ գումարի չափից, քանի որ տվյալ գործարքը չի հանդիսանում ձեռնարկատիրական նպատակ հետապնդող.

բ) եթե ներմուծումը կատարվել է երրորդ երկրից, ապա կհարկվի, եթե ներմուծվող ապրանքի արժեքը գերազանցում է 200 000 ՀՀ դրամը.

գ) բոլոր դեպքերում մաքսավճար կվճարվի, քանի որ ներմուծումը կատարվել է երրորդ երկրից.

դ) եթե ներմուծումը կատարվել է երրորդ երկրից , ապա մաքսավճար չի վճարվի, եթե ներմուծված ապրանքի արժեքը չի գերազանցում 200 եվրոն:

2. Եթե ՀՀ ռեզիդենտ ԱԱՀ վճարող Ա/Ձ-ն ՀՀ տարածքում անշարժ գույք է վարձակալել օտարերկրյա ֆիզիկական անձից և նրա անունից գրում է ինքնահաշիվ, ապա ինքնահաշվում առանձնացված ԱԱՀ գումարը կարող է հաշվանցել՝

ա) այո.

բ) ոչ:

4. Կազմակերպությունը ՀՀ տարածք է ներմուծել բնապահպանական վճարով հարկման ենթակա ապրանքներ, սահմանին վճարել է բնապահպանական վճարը և այն օգտագործել է արտադրական նպատակներով: Նշվածներից ո՞ր պնդումն է ճշմարիտ՝

ա) տվյալ արտադրանքի մեջ բնապահպանական վճարին բաժին հասնող հումքի մասով իրացման ժամանակ ևս պիտի վճարի բնապահպանական վճար.

բ) բնապահպանական վճար այլևս չի վճարի, քանի որ սահմանին վճարել է.

գ) բնապահպանական վճար այլևս չի վճարի և վճարված գումարները կմտցվի ինքնարժեքի մեջ.

դ)Եթե արտադրվող ապրանքները չեն հանդիսանա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնօգտագործման վճարով հարկման ենթակա ապրանքներ, ապա բնապահպանական վճար այլևս չի վճարի և վճարված գումարները կմտցվի ինքնարժեքի մեջ:

5. Եթե 2017թ.-ի ընթացքում ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունում իրականացվում են ստուգումներ, և ստուգման ընթացքում հայտնաբերվում են խախտումներ, որ տարիներում կատարված խախտումների համար չի կարող կիրառվել պատասխանատվության միջոցներ: Նշել սխալ պատասխանները`

ա) 2012թ.

բ) 2011թ.

գ) 2013թ.

դ)նշված պատասխանների մեջ ճիշտ պատասխանը բացակայում է:

6.Հիմնական միջոցի` որպես գրավ ստացում

ա) Դտ 916.

բ) Դտ 111

Կտ 521.

գ)Դտ 118

Կտ 251:

7.Մասնակցի կողմից կանոնադրական կապիտալում ներդրումների գծով պարտքի մարում` նյութերով`

ա) Դեբետ 211

Կրեդիտ 312

բ) Դեբետ 211

Կրեդիտ 311

գ) Դեբետ 211

Կրեդիտ529:

8. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճի արտացոլում՝

ա) Դեբետ 726

Կրեդիտ 231

բ) Դեբետ 231

Կրեդիտ 671

գ) Դեբետ 231

Կրեդիտ 626:

9. Մաշվող հիմնական միջոցի շահագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցի դասակարգում՝

ա) Դեբետ 118

Կրեդիտ 111.

բ) Դեբետ 118

Կրեդիտ 811.

գ) Դեբետ 118

Կրեդիտ 821.

դ) Բոլոր պատասխանները սխալ են:

10. «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32-ի համաձայն, բաժնային գործիքը սահմանվում է որպես՝

ա) պայմանագիր է, որը հավաստում է կազմակերպության՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացած ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք.

բ) կազմակերպության բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող հիմնական փաստաթուղթն է.

գ) պայմանագիր է, որը հավաստում է կազմակերպության ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք:

11. «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ի համաձայն, ե՞րբ է տվյալ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով առկա արժեզրկումից կորուստ՝

ա) երբ նրա իրական արժեքը մեծ է փոխհատուցվող գումարից.

բ) երբ նրա հաշվեկշռային արժեքը մեծ է փոխհատուցվող գումարից.

գ) երբ նրա վերագնահատված արժեքը մեծ է փոխհատուցվող գումարից:

12. «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի համաձայն՝ հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը, որը ներառված էր սեփական կապիտալում՝

ա) կարող է ուղղակիորեն վերագրվել հաշվետու ժամանակաշրջանի շահույթին, երբ ակտիվները ապաճանաչվում են.

բ) կարող է ուղղակիորեն վերագրվել չբաշխված շահույթին, երբ ակտիվներն ապաճանաչվում են.

գ) կարող է ուղղակիորեն վերագրվել հաշվետու ժամանակաշրջանի շահույթին, եթե կազմակերպությունն ակտիվները հաշվառում է ըստ վերագնահատված արժեքի մեթոդի:

13. Ի՞նչ դրույքաչափով է հաշվարկվում օտարերկրյա քաղաքացիների ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը՝

ա) տասը տոկոս դրույքաչափով.

բ) հինգ տոկոս դրույքաչափով.

գ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիների կողմից ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկ չի գանձվում.

դ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիների կողմից ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկ չի գանձվում, եթե շահաբաժինների ստացման մասին մասնակիցների որոշում չի կայացվում.

14. Առևտրային կազմակերպությունների լուծարման ընթացքում դրանց կողմից սեփականության իրավունքի օբյեկտները բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների միջև բաշխելու գործարքը՝

ա) ազատված է ավելացված արժեքի հարկից.

բ) հարկվող օբյեկտ չի համարվում.

գ) ենթակա է ԱԱՀ-ով հարկման սահմանված ընդհանուր կարգով.

դ) ենթակա է ԱԱՀ-ով հարկման՝ առանց մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման:

15. Շահութահարկի հաշվարկ չեն ներկայացնում՝

ա) ոչ առևտրային կազմակերպությունները, եթե ստացած միջոցները օրենքի համաձայն եկամուտ չեն համարվում.

բ) միայն իրենց կանոնադրությամբ նախատեսված գործունեություն իրականացնող կրոնական կազմակերպությունները և քաղաքական կուսակցությունները.

գ) միայն ակցիզային հարկով հարկվող գործունեություն իրականացնող հարկատուները:

«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՍՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՍՐՑԱՇԱՐԻ II ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Խնդիր

«Սթայլ» ՍՊԸ-ի 2016թ. իրացման շրջանառությունը, գործունեության բոլոր տեսակները միասին վերցրած, կազմել է 118 500 000 ՀՀ դրամ: 2016թվականին «Սթայլ» ՍՊԸ-ն աշխատել է շրջանառության հարկով: 2017թվականի փետրվարի 12-ին կազմակերպությունը հարկային վերադաս մարմնի սահմանված կարգով ներկայացրել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Կազմակերպության համար հաշվետու ժամանակաշրջան է հանդիսանում 2017թ.-ի հունվար ամիսը:

1. 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունն ունեցել է 56 500 հազ. դրամի ապրանքներ, որի ձեռքբերման ԱԱՀ-ն կազմել է 3400 հազ. դրամ:
2. 2017 թվականի հունվարի 12-ին Ռուսաստանից ՀՀ տարածք է ներմուծել 52000 հազ. դրամի բժշկական պարագաներ, 30000 հազ. դրամի դեղորայք, սովյալ ներմուծման համար տրանսպորտային ծախսերը կազմել է 1200 հազ.:
3. Նույն հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների պիտանելիության ժամկետի սպառման պատճառով հետ է վերցրել և ոչնչացրել է 5400 հազ. դրամ ինքնարժեքով դեղորայք, որը իրացրած է եղել նախկին հաշվետու ժամանակաշրջաններում:
4. Նույն հաշվետու ժամանակաշրջանում ծառայությունների մատուցումի և ապրանքների իրացումից ստացել է 30000 հազ. դրամի հասույթ /առանց ԱԱՀ-ի/:

Որոշել կազմակերպության հունվար ամսվա վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը:

Պատասխան`

1. 52 000 հազ. ԱԱՀ-ից ազատված ապրանքներ

30 000 հազ. ԱԱՀ-ով հարկվող ապրանքներ

1 200 հազ.տրանսպորտային ծախսեր

436 հազ.տրանսպորտային ծախսերի ԱԱՀ-ով հարկվող մաս/ըստ գումարի տես. կշռի/

6087,2հազ. ԱԱՀ դտ $(30000+436)*0,2$

2. Ոչնչացված դեղորայքի մասով ԱԱՀ-ի հաշվանցման կամ պակասեցման գումար չի առաջանա.

3. 6000 հազ. ԱԱՀ կտ $(30000*0,2)$

Պատասխան`

Համաձայն հունվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի կառաջանա հաշվանցման ենթակա

ԱԱՀ` 87,2 հազ. :